ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի

ղեկավար՝ Արկադի Փելեշյանին

Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 22

«Ժողովրդավարական համախմբում» կուսակցության

նախագահ՝ Սուրեն Պետրոսյանից

Անձը հաստատող փաստաթուղթ՝ 009959032 տրված՝ 09.02.2018 004-ի կողմից

Իրազեկում

/նախընտրական քարոզչության շրջանակներում համերգային միջոցառում իրականացնելու վերաբերյալ/

Հարգելի՛ պարոն Փելեշյան,

ՀՀ «Ընտրական օրենսգրքի» 19-րդ հոդվածի 1.1-ից 1.3 կետերի համաձայն. «1.1. Սույն օրենսգրքի իմաստով՝ նախընտրական քարոզչություն է համարվում ցանկացած գործողություն, որը նպատակ ունի համոզելու ընտրողներին՝ քվեարկելու կամ չքվեարկելու որոշակի թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին:

1.2. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ թեկնածուի կողմից համերգների, ներկայացումների, մարզական միջոցառումների, ֆիլմերի ցուցադրության և այլ միջոցառումների ֆինանսավորումը կարող է իրականացվել միայն նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին:

1.3. Քաղաքական գովազդը նախընտրական քարոզչության ձևերից է, որը նպատակ ունի համոզելու ընտրողներին՝ քվեարկելու կամ չքվեարկելու որոշակի թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին: Քաղաքական գովազդը ներառում է ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) կամ թեկնածուներին բնորոշող խորհրդանիշներ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
«13» 05 2026թ.
Մտից N 01 Գործ N 7273

կամ անհատականացնող այլ նշաններ: Քաղաքական գովազդ են համարվում նաև տեսաձայնային հայտարարություններն այն մասին, որ համերգները կամ հանրային այլ միջոցառումներն իրականացվում են կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ թեկնածուի աջակցությամբ, կամ որոնք ներառում են թեկնածուի կողմից այդ հանրային միջոցառումներին մասնակցության մասին փաստի հիշատակում»:

Հանդիսանալով «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության նախագահ՝ սույնով հայտնում եմ, որ մայիսի 17-ին ժամը՝ 13:30-ից մինչև 16:00-ն Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 34 հասցեում գտնվող «Արցախի պուրակ» բացօթյա հատվածում կուսակցությունը նախատեսում է իրականացնել համերգային միջոցառում նախընտրական քարոզչության շրջանակներում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ ապահովել սույն գրության շրջանակներում իրազեկվող և իրականացվելիք միջոցառումների կազմակերպման համար համայնքի կողմից կատարման ենթակա գործողությունների ընթացքը:

Հարգանքով՝

«Ժողովրդավարական համախմբում կուսակցության»

նախագահ՝ Սուրեն Պետրոսյան

12.05.2026թ.